

Երուսաղէմի Հ.Օ.Միութիւնը Կը Կատարէ Իր Տարեկան Պագարը

3 Դեկտեմբեր 2005
Երուսաղէմ

Երուսաղէմի Հայ Օգնութեան Միութեան ժրաջան վարչութիւնը այս տարի ալ լծուեցաւ գործի ու գլուխ բերաւ, բացառիկ ճիտութեամբ, տարեկան պագարը ուր վաճառքի դրուեցան զանազան ձեռագործներ, Նոր Տարւոյ-Կաղանդի վերաբերող զարդարանքներ, այլեւայլ տնային մանր իրեր եւ վերջապէս Հայկական խոհանոցի բացառիկ ճաշեր:

Ուրբաթ, 2 Դեկտեմբեր 2005ի յետ միջօրէի ժամը 4ին, Սրբազան Պատրիարք Հայրը կատարեց սրահին բացումը, որը շուտով խճողուեցաւ մեծ թիւով հետաքրքիրներով, որոնք իրենց առ եւ տուրով շատ գոհ ձգեցին Հ.Օ.Մ.ի վարչուիները:

Յաջորդ օրը, Շաբաթ առաւօտեան ժամը 10է սկսեալ մինչեւ երեկոյեան 6ը Հ.Օ.Մ.ի խոհանոցը հանգիստ չգտաւ, մինչ ցուցադրեալ իրերը գրեթէ սպառեցան:

Կը շնորհաւորենք Հ.Օ.Մ.ի վարչութեան ձեռքբերուած յաջողութեան համար:



